ՎԴ/12205/05/24

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3 հունվարի 2025 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ Հովսեփ Բեղնյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին փոխարինող Էդգար Սեդրակյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, նիստում ուսումնասիրելով թիվ ՎԴ/12205/05/24 գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2024 թվականի դեկտեմբերի 12-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Արթուր Մարգարյանը 2024 թվականի հոկտեմբերի 3-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետի 2011 թվականի հուլիսի 12-ի թիվ 3055-Ա որոշման հիման վրա Երևան քաղաքի Կ.Ուլնեցու փողոցի թիվ 55/1 հասցեում գտնվող, իրեն սեփականության իրավունքով պատկանող հողամասին կից 163.0 քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելուն պարտավորեցնելու պահանջի մասին:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2024 թվականի հոկտեմբերի 16-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2024 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարան:

4. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի դեկտեմբերի 23-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածին, 77-րդ հոդվածին, 81-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետին, 436-րդ հոդվածի 1-ին կետին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ ԵԱՔԴ/1369/02/09, 2015 թվականի նոյեմբերի 27-ի թիվ ՎԴ/12145/05/13 և 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/1621/05/14 գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ ՀՀ վարչական դատարանը 2024 թվականի հոկտեմբերի 16-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) Քննարկվող դեպքում համաձայն Երևանի քաղաքապետի 12.07.2011 թվականի թիվ 3055-Ա որոշման 1-ին կետով՝ որոշվել է Կ. Ուլնեցու փողոցի 55/1 հասցեում գտնվող Արթուր Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասին կից 163.0քմ մակերեսով հողամասը, կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել (վաճառել) իրեն:*

Նույն որոշման 3-րդ կետի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը

լիազորվել է Երևանի քաղաքապետի անունից Արթուր Մարգարյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:

Վերը շարադրված փաստական հանգամանքերի հաշվառմամբ Դատարանը փաստում է, որ Հայցվորի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի շրջանակներում արդեն իսկ ընդունվել է բարենպաստ վարչական ակտ, իսկ սույն գործով ներկայացված հայցադիմումի բովանդակությունից պարզ է դառնում, որ վեճն, ըստ էության, վերաբերում է նշված որոշման փաստացի կատարմանը, այն է՝ ընդունված որոշման հիման վրա հողամասի առուվաճառքի պայմանագիր կնքելուն, որպիսի պայմանագրի կնքումը Դատարանի գնահատմամբ վարչարարություն չի հանդիսանում: Այլ կերպ՝ հողամասն ուղղակի վաճառքով տրամադրելու մասին որոշման հիման վրա առուվաճառքի պայմանագրի կողմերը հանդիսանում են իրավահավասար սուբյեկտներ, որտեղ Երևանի քաղաքապետարանը հանդես է գալիս որպես վաճառող և տվյալ քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում հանդես է գալիս պետության անունից:

Վերը նշված իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը և հայցադիմումով ներկայացված պահանջը, ՀՀ վարչական դատարանը գտնում է, որ սույն դեպքում հայցվորի կողմից ներկայացված պահանջը բխում է քաղաքացիաիրավական հարաբերություններից, քանի որ խոսքը վերաբերում է քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելուն:

(…)

Ողջ վերը շարադրվածը հիմք ընդունելով՝ Դատարանը գտնում է, որ վեճը ծագել է ոչ թե հանրային իրավունքի, այլ՝ մասնավոր իրավունքի ոլորտում, իրավահավասար սուբյեկտների կողմից պայմանագիր կնքելու առնչությամբ և ենթակա է քննության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում»[1]:

6. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետին, 20-րդ հոդվածի 1-ին մասին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի

[1] Տե՛ս դատական գործը, թերթեր 55-60:

3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 26-րդ հոդվածի 2-րդ մասին, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի փետրվարի 3-ի թիվ ՍԴՈ-787 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշմանը, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 27-ի թիվ ԵԱՔԴ/0433/02/11, 2015 թվականի նոյեմբերի 27-ի թիվ ՎԴ/12145/05/13 և 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ԵՄԴ/1029/02/14 գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2024 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և այդ առնչությամբ դիմել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով հետևյալը. *«(…) Տվյալ դեպքում Երևանի քաղաքապետի 12.07.2011 թվականի թիվ 3055-Ա որոշման հիման վրա քաղաք Երևան, Կ.Ուլնեցու փողոցի թիվ 55/1 հասցեում գտնվող Արթուր Տերևի Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասին կից՝ 163.0 քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելուն պարտավորեցնելու վերաբերյալ առաջացած վիճելի իրավահարաբերության կողմերից մեկը՝ Երևանի քաղաքապետարանը, հանդիսանում է հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ:*

Երևանի քաղաքապետի 12.07.2011 թվականի թիվ 3055-Ա որոշման հիման վրա քաղաք Երևան, Կ.Ուլնեցու փողոցի թիվ 55/1 հասցեում գտնվող Արթուր Տերևի Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասին կից՝ 163.0 քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելուն պարտավորեցնելու առնչությամբ առաջացել է այնպիսի իրավահարաբերություն, որն իր բովանդակությամբ հանրային է, քանի որ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը՝ Երևանի քաղաքապետարանը, իրացրել է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կապակցությամբ իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը:

Այսպիսով, պարզ է դառնում, որ Երևանի քաղաքապետարանին Երևանի քաղաքապետի 12.07.2011 թվականի թիվ 3055-Ա որոշման հիման վրա քաղաք Երևան, Կ.Ուլնեցու փողոցի թիվ 55/1 հասցեում գտնվող Արթուր Տերևի Մարգարյանին

սեփականության իրավունքով պատկանող հողամասին կից՝ 163.0 քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելուն պարտավորեցնելու վերաբերյալ առաջացած վիճելի իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման, այն է՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տիրապետման, տնօրինման և օգտագործման կապակցությամբ և ուղղված է եղել այդ հանրային շահի սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը:

(…)

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ սույն դեպքում վեճը ծագել է այնպիսի իրավահարաբերությունից, որի բովանդակությունը հանգում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման ենթադրյալ պարտականությանը, ինչը ենթադրում է վարչական մարմնի կողմից իր այն գործադիր-կարգադրիչ գործառույթի իրականացում, որպիսի պարագայում սույն վեճը ենթակա է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով քննության, և ենթակա չէ քննության ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին»[2]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը</u>.

7. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավո՞ր է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/12205/05/24 գործն ըստ Արթուր Մարգարյանի հայցի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետի 2011 թվականի հուլիսի 12-ի թիվ 3055-Ա որոշման հիման վրա Երևան քաղաքի Կ.Ուլնեցու փողոցի թիվ 55/1 հասցեում գտնվող իրեն սեփականության իրավունքով պատկանող հողամասին կից 163.0 քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելուն պարտավորեցնելու պահանջի մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:*

[2] Տե՛ս դատական գործը, թերթեր 67-69:

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝*

1) վարչական դատարանը. (...)»:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

Նշված օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի»:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) 2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:*

(...)

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած դատավորների կազմից և նրանց կողմից որոշված դատավորը կազմում է որոշման նախագիծը:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացվելու դեպքում չի կարող վերաքննիչ բողոք բերվել սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով այն պատճառաբանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, (...)»:*

Նույն օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության»:*

9. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին ՀՀ Վճռաբեկ դատարանը մանրամասն անդրադարձ է կատարել *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության* վարչական գործով կայացված որոշման շրջանակներում՝ արձանագրելով հետևյալը. *«(...) [Հ]անրային իրավահարաբերությունը մասնավոր*

հարաբերությունից տարանջատվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ և թե՛ օբյեկտով: Այդ տարրերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը: Իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (վարչական մարմիններ, դրանց պաշտոնատար անձիք, այդ թվում պետական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ: (…) Հանրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները (…)»[3]:

9.1. ՀՀ Վճռաբեկ դատարանը մեկ այլ՝ *Գոռիշխան Իշիկյանն ընդդեմ ««ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ-ի և ՀՀ Կառավարության առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության, երրորդ անձ Հռիփսիմե Իշիկյանի* քաղաքացիական գործով կայացված թիվ ԵՄԴ/1029/02/14 որոշմամբ արձանագրել է. *«[Հ]անրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները: Իրավահարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը*

[3] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության* վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 որոշումը:

վարչական դատարանին ընդդատյա լինելու հանգամանքը պարզելու նպատակով պետք է գնահատման առարկա դարձվեն հետևյալ հանգամանքները.

1. արդյո՞ք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, թե՝ ոչ,

2. արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե՝ ոչ,

3. արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե՝ ոչ:

Միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր փաստել իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը, ինչպես նաև այդ հարաբերությունից բխող վեճերի ընդդատության հարցը՝ հաշվի առնելով նաև այն կարևոր հանգամանքը, որ հանրային հարաբերություններից բխող բոլոր վեճերը չեն, որ վերապահված են վարչական դատարանի քննությանը, (...)»[4]:

9.2. Մեկ այլ որոշմամբ վերահաստատելով վերը նշված դիրքորոշումները՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով իրավահարաբերության բնույթը պարզելու նպատակով կիրառվելիք մեխանիզմներին, *Լուսինե Սահակյանն ընդդեմ ՀՀ փաստաբանների պալատի* քաղաքացիական գործով 2022 թվականի մայիսի 13-ի որոշմամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը. *«Իրավահարաբերության բնույթը պարզելու համար հարկավոր է այն դիտարկել շահերի տեսության, ենթակարգության տեսության և հատուկ իրավունքի տեսության համատեքստում:*

Ըստ շահերի տեսության՝ հանրային իրավունքը մասնավորից տարբերվում է այն շահի տեսակով, որոնք պաշպանվում են առանձին իրավանորմով: Այն իրավանորմերը, որոնք ծառայում են հանրային կամ ընդհանուր շահին, պատկանում են հանրային

---

[4] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *Գոռիշիան Իշիկյանն ընդդեմ ««ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ-ի և ՀՀ Կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության, երրորդ անձ Հռիփսիմե Իշիկյանի* քաղաքացիական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ԵՄԴ/1029/02/14 որոշումը:

իրավունքին: Մինչդեռ, մասնավոր իրավանորմերը ծառայում են մասնավոր կամ անհատական շահերին:

Ենթակարգության տեսությունը ելնում է մասնակիցների հարաբերությունների բնույթից և կիրառվում է միայն այն դեպքում, երբ հարաբերության մասնակիցներն են մի կողմից պետությունը, իսկ մյուս կողմից քաղաքացին: Ըստ այս տեսության՝ այն իրավանորմերը, որոնք կարգավորում են հանրային իշխանությունը կրողների գործողությունները, համարվում են հանրային-իրավական, երբ դրանք վերաբերում են վերադասության-ենթակայության հարաբերությանը: Եթե մասնակիցների միջև առկա է վերադասության-ենթակայության հարաբերություն, ապա իրավահարաբերությունը հանրային է, իսկ եթե իրավունքի երկու սուբյեկտները միմյանց առջև հանդես են գալիս իրավահավասար կերպով, ապա առկա են մասնավոր-իրավական հարաբերություններ:

Հատուկ իրավունքի տեսությունն իր հերթին նույնպես կոչված է պարզելու վեճի հանրային-իրավական բնույթը: Այն ելնում է վեճը լուծող իրավանորմերի իրավական բնույթից: Ըստ այս տեսության՝ եթե վեճը լուծվում է հանրային-իրավական նորմերի միջոցով, ապա առկա է հանրային-իրավական վեճ, իսկ եթե վեճը լուծում են մասնավոր-իրավական նորմերը, ապա կունենանք մասնավոր-իրավական վեճ:

Վերոնշյալ տեսությունների հիմքում դրված չափանիշներից ելնելով՝ անհրաժեշտ է անդրադառնալ հետևյալ հարցերին.

- որ նորմերն են լուծում վեճը,

- արդյո՞ք դրանք հանրային-իրավական նորմեր են (ինչ շահերի պաշտպանությանն են ուղղված այդ նորմերը),

- արդյո՞ք իրավահարաբերության մասնակիցների միջև առկա է վերադասության-ենթակայության հարաբերություն»[5]*:*

10. Սույն որոշման 8-9.2-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից և մեջբերված իրավական դիրքորոշումներից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր

[5] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *Լուսինե Սահակյանն ընդդեմ ՀՀ փաստաբանների պալատի* քաղաքացիական գործով 2022 թվականի մայիսի 13-ի թիվ ԵԴ/38635/02/19 որոշումը:

գործերը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ, օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

11. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ *«Քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների՝ առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:*

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝ օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 436-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *«Պայմանագիր է համարվում երկու կամ մի քանի անձանց համաձայնությունը, որն ուղղված է քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարելուն»:*

12. ՀՀ Վճռաբեկ դատարանը *Սուսաննա Համբարձումյանի ընդդեմ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության, երրորդ անձինք Ելիզավետա Սարգսյանի, Աղասի Դանիելյանի, Անդրանիկ Դանիելյանի, «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի և «Ունիվերսամ Ավան» ՍՊԸ-ի* վարչական գործով կայացված թիվ ՎԴ/9457/05/18 որոշմամբ արձանագրել է. *«Ահուրդը հաղթած անձի՝ լուրի համար ամենաբարձր հայտ ներկայացրած մասնակցի, եթե ահուրդն անցկացնելու օրը ստորագրվում է դրա արդյունքների մասին արձանագրություն, որով ազդարարվում է լուրի վերաբերյալ*

աճուրդի ավարտը: Արձանագրությունը ստորագրելու փաստի ուժով մասնակցին անցնում է լոտի վերաբերյալ առուվաճառքի մասին պայմանագիր կնքելու իրավունքը, որն իրացնելու դեպքում վերջինս երեք աշխատանքային օր ժամկետում Ծառայության դեպոզիտ հաշվին կամ դրամարկղ է մուծում լոտի գնման գնի և նախավճարի տարբերությունը, իսկ դրան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում Ծառայության հետ կնքում առուվաճառքի պայմանագիր: Մասնակցի կողմից պայմանագիր կնքելու իրավունքից հրաժարվելու կամ լոտի գնման գինը չփոխանցելու դեպքերում հարկադիր էլեկտրոնային աճուրդը համարվում է չկայացած: Շարադրվածի ամփոփմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ աճուրդն ինքնին պայմանագիր կնքելուն ուղղված գործողությունների համալիր է, որը եզրափակվում է աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրմամբ, որպիսի պահից աճուրդը հաղթող մասնակցին, այսինքն՝ արձանագրությունը ստորագրողին, անցնում է լոտի վերաբերյալ առուվաճառքի պայմանագիր կնքելու իրավունքը:

Վերոգրյալից բխում է, որ արձանագրություն ստորագրելու գործողությամբ ավարտվում է Ծառայության, որպես վարչական մարմնի, հանրային իշխանական լիազորությունների իրականացումը, ինչի արդյունքում աճուրդը հաղթած մասնակցի մոտ ծագում է լոտի վերաբերյալ առուվաճառքի պայմանագիր կնքելու իրավունք: Փաստացի՝ արձանագրությունը ստորագրելու իրողությամբ աճուրդն ավարտվում է՝ դադարեցնելով Ծառայության կողմից հանրային իշխանական լիազորությունների իրականացումը ևս: Արդյունքում Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Ծառայության, և աճուրդը հաղթած մասնակցի միջև ծագում են մասնավոր՝ քաղաքացիաիրավական, իրավահարաբերություններ:

Վարչական մարմինը որոշակի իրավահարաբերության մեջ կարող է ներկայանալ ոչ միայն որպես հանրային իշխանական լիազորություններ կրող մարմին, այլ նաև որպես տվյալ իրավահարաբերության մյուս մասնակիցներին հավասար սուբյեկտ: Ասվածից պարզ է, որ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ այդ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ յուրաքանչյուր դեպքում

կարևորվում է ոչ միայն իրավահարաբերության սուբյեկտային կազմը, այլ նաև դրա օբյեկտն ու բովանդակությունը»[6]:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Երևանի քաղաքապետի 2011 թվականի հուլիսի 12-ի թիվ 3055-Ա որոշման 1-ին կետով որոշվել է Կ.Ուլնեցու փողոցի 55/1 հասցեում գտնվող Արթուր Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասին կից 163.0քմ մակերեսով հողամասը, կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել (վաճառել) իրեն:

Նույն որոշման 3-րդ կետի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը լիազորվել է Երևանի քաղաքապետի անունից Արթուր Մարգարյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր,

- Արթուր Մարգարյանը 2024 թվականի մայիսի 7-ին դիմում է ուղղել Երևանի քաղաքապետարանին՝ խնդրելով իր հետ կնքել Երևանի քաղաքապետի 2011 թվականի հուլիսի 12-ի թիվ 3055-Ա որոշմամբ հողամասն ուղղակի վաճառքով օտարելու վերաբերյալ պայմանագիր,

- ի պատասխան վերը նշված դիմումի՝ Երևանի քաղաքապետարանը հայտնել է, որ բարձրացված հարցի քննարկմանը հնարավոր կլինի անդրադառնալ գազատարի տեղադրման աշխատանքների ավարտից և հողամասի առկա համադրումների վերացումից հետո,

- Արթուր Մարգարյանը 2024 թվականի հունիսի 18-ին կրկին դիմում է ուղղել Երևանի քաղաքապետարանին՝ խնդրելով ընթացք տալ հարուցված վարչական վարույթին և իր հետ կնքել Երևանի քաղաքապետի 2011 թվականի հուլիսի 12-ի թիվ 3055-Ա որոշմամբ հողամասն ուղղակի վաճառքով օտարելու վերաբերյալ պայմանագիր,

- վերը նշված դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի շրջանակներում նշանակվել են վարչական վարույթի լսումներ և կազմվել է արձանագրություն, որի համաձայն՝ իրավաբանական վարչության ներկայացուցչի

---

[6] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *Սուսաննա Համբարձումյանի ընդդեմ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության, երրորդ անձինք Ելիզավետա Սարգսյանի, Աղասի Դանիելյանի, Անդրանիկ Դանիելյանի, «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի և «Ունիվերսալ Ավան» ՍՊԸ-ի* վարչական գործով 2022 թվականի մայիսի 26-ի թիվ ՎԴ/9457/05/18 որոշումը:

կողմից հայտնվել է, որ համապատասխան հիմքերի առկայության պարագայում խնդրո առարկա՝ Երևանքի քաղաքապետի որոշումը, կարող է չեղյալ ճանաչվել, իսկ ճարտարապետության և քաղաքաշինության վարչության ներկայացուցչի կողմից հայտնվել է, որ կներկայացվեն լրացուցիչ հիմնավորումներ նշված որոշման չեղարկման մասով,

- Ավետիս Սահակյանը 2024 թվականի հոկտեմբերի 3-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետի 2011 թվականի հուլիսի 12-ի թիվ 3055-Ա որոշման հիման վրա Երևան քաղաքի Կ.Ուլնեցու փողոցի թիվ 55/1 հասցեում գտնվող, իրեն սեփականության իրավունքով պատկանող հողամասին կից 163.0 քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելուն պարտավորեցնելու պահանջի մասին[7],

- վերոնշյալ գործը ՀՀ վարչական դատարանի՝ 2024 թվականի հոկտեմբերի 16-ի որոշմամբ վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ վեճը ծագել է ոչ թե հանրային իրավունքի, այլ մասնավոր իրավունքի ոլորտում, իրավահավասար սուբյեկտների կողմից պայմանագիր կնքելու առնչությամբ և ենթակա է քննության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում[8],

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2024 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով, որ տվյալ դեպքում վեճը ծագել է այնպիսի իրավահարաբերությունից, որի բովանդակությունը հանգում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման ենթադրյալ պարտականությանը, ինչը ենթադրում է վարչական մարմնի կողմից իր գործադիր-կարգադրիչ գործառույթի իրականացում,

[7] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:
[8] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

հետևաբար սույն վեճը ենթակա չէ քննության ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում[9]:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-12-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նկատել, որ Արթուր Մարգարյանի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի շրջանակներում արդեն իսկ ընդունվել է վարչական ակտ, իսկ սույն գործով ներկայացված հայցադիմումի բովանդակությունից հետևում է, որ տվյալ դեպքում վեճը վերաբերում է նշված որոշման փաստացի կատարմանը՝ Երևանի քաղաքապետի 2011 թվականի հուլիսի 12-ի թիվ 3055-Ա որոշման հիման վրա հողամասի առուվաճառքի պայմանագրի կնքմանը, որի կողմերը հանդիսանում են իրավահավասար սուբյեկտներ, քանի որ Երևանի քաղաքապետարանը տվյալ իրավահարաբերության մեջ հանդես է գալիս ոչ թե որպես հանրային իշխանական լիազորություններ կրող մարմին, այլ որպես տվյալ իրավահարաբերության մյուս մասնակցին հավասար սուբյեկտ: Հետևաբար, Երևանի քաղաքապետարանի և Արթուր Մարգարյանի միջև ծագել են մասնավոր՝ քաղաքացիաիրավական իրավահարաբերություններ, քանի որ տվյալ դեպքում հայցվորի կողմից ներկայացված պահանջը վերաբերում է քաղաքացիաիրավական պայմանագրի կնքմանը:

15. Վերոգրյալից հետևում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/12205/05/24 գործն ըստ Արթուր Մարգարյանի հայցի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետի 2011 թվականի հուլիսի 12-ի թիվ 3055-Ա որոշման հիման վրա Երևան քաղաքի Կ.Ուլնեցու փողոցի թիվ 55/1 հասցեում գտնվող, իրեն սեփականության իրավունքով պատկանող հողամասին կից 163.0 քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելուն պարտավորեցնելու պահանջի մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին, հիմնավոր չէ:

---

[9] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

Ուստի, Արթուր Մարգարյանի հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ/12205/05/24 գործը ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

թիվ ՎԴ/12205/05/24 գործն ըստ Արթուր Մարգարյանի հայցի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետի 2011 թվականի հուլիսի 12-ի թիվ 3055-Ա որոշման հիման վրա Երևան քաղաքի Կ.Ուլնեցու փողոցի թիվ 55/1 հասցեում գտնվող, իրեն սեփականության իրավունքով պատկանող հողամասին կից 163.0 քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելուն պարտավորեցնելու պահանջի մասին, ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀՈՎՍԵՓ ԲԵԴԵՎՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԷԴԳԱՐ ՍԵԴՐԱԿՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ